

գահի աջ ու ձախ կողմում կանգնած են, խոնարհ և ձեռները կրծքերի վրայ խաչաձև ծալած: Այս ժամանակ երևում է հրեղէն ձիու վրայ նստած լուսեղէն մի ձիաւոր, որ արագութեամբ յառաջանում է դէպի Աստուածածնի գահը: Գալիս, կանգնում է Աստուածածնի առջև և սպասում:

Աստուածածինը հարցնում է.— Կատարեցի՞ր:

— Այո, կատարեցի, պատասխանում է ձիաւորը. քառասուն գազ հոր փորեցի, և մէջը ձգելով քարկոծեցի. հողով, մարմնով կորաւ. ոչ հոգին ելաւ առ Աստուած, ոչ մարմինն իջաւ գերեզման:

— Այս ի՞նչ բան է, հարցնում է Ալմօն:

— Այդ արդէն քո գիտենալու բանը չէ, պատասխանում է Գարբիէլ հրեշտակապետը:

Մէկ էլ լսում է. «Աղէ, աղէ, վեկաց», վեր է կենում, բաց անում աչքերը, տեսնում, որ հիւանդ որդին իրեն ձայն է տալիս, բարկանում է, թէ ինչի՞ ձայն տուեց և թոյլ չտուեց տեսնելու և՛ իւր ախրը:

#### ՄՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ թոնիրը լաւ չի վառում, տանտիկիւնները ակից շորով քամի են տալիս, քորքորում են», ասելով.

Չը՛խ, չը՛խ, չը՛խ,

Մուխը բռնէք,

Աղ բարձէք.

Չը՛խ, չը՛խ, չը՛խ:

Խմոր շաղախելիս երբ ջուր են լցնում, ասում են. Յիսուս, Քրիստոս, Աստծու բարաքէն մէջն հիւի:

Երբ հացառը (ուֆաթէն, բաթաթը) առաջին անգամ խփում են թոնրին, այսինքն առաջին հացը կոչնում են թոնրի կոզին՝ որ թխուի, ասում են.

Թագա-խաց-խացի հրեշտակներ,

Դուք իմդաղ (օդնական) հլնէք, շաբը բարին դարձնէք:

Երբ հացը թոնրի մէջ տօտօում է, հացթուխը ասում է.

Խէր, խէր,

Խացին հեժնութեն,

Մահին թանգութեն,

Իմ խօրն ու մօրն

Արքայութեն:

Հաց թխելու աւարտին գրտնկողը գրտընակը համբուրում,

դնում է գլխին, իսկ հացթուխը խաշակնքում է հացառն ու թոնիրը՝ ասելով.

Խաց խացի խրիշտակներ,  
 Պաղ սուփրայ, տաք թունդիր,  
 Արդար եղան վաստակ,  
 Բարեխօս հլնէք Աստծուն.  
 Աշխարքին խէր խաղաղութեն տաք,  
 Աղքատ խօքուս օղորմանաք:

Հաց թխելիս առաջին հացը հացթուխը խաշակնքում է և տալիս, որ տանեն փողոց, առաջին հանդիպողին տան, որովհետև հաւատում են, որ այս բարեբարութիւնը թօխարը թարախա հլնում ա երկնքի երեսը, Աստծու մօտ բարեխօս ա հլնում, շարը բարին ա դարձնում:

«Առջնաթուխ» <sup>1)</sup> 7 հացը տնեցիները չեն ուտում, որովհետև ուտողի ամուսինը կը մեռնի:

Թոնրից հանած հացը տաք-տաք չեն ուտում, այլապէս կը կատաղեն:

Այրուած հացը ուտում են, որպէսզի փող դանեն:

Ով հացի մէջ տեղն ուտի և կողքերը թողնի, այդ կողքերը այն կեանքում օղ կանեն և նրա վիզը կը ձգեն:

Հարսանից փոխ բերած հացը պէտք է վերադարձնել, որովհետև երկու քայր մի փոխ բերած հացի համար դժոխք են դնացել: Հացը դանակով չեն կտրում, մեղք է:

Հացը «շոշոնք» (շուռ տուած, հակառակ կողմից), չեն դնում սեղանի վրայ, մեղք է:

Եթէ հացի պատառը ձեռքից վայր ընկնի՝ հիւր կը գայ:

Ճանապարհին հացի կտոր տեսնելիս «դամաթ» են համարում, վերցնում են ուտում, կամ շանը տալիս, և կամ մի մաքուր տեղ դնում:

Լուացք անելիս թքում են սապնի վրայ և ասում.

Թու, թու, թու.

Թաքնի (տաշաի) որքը մաշի,

Սապոնինը չմաշի.

Որպէս զի քիչ սապոն գործածուի:

Երբ գլխները լուանում են և սկսում սանրել՝ խճճուած մազերը շուտով հարթելու համար ասում են.

Օղորմի անյիշատակ պառուին,

Օխար դան (անգամ) գնաց Երուսաղէմ,

<sup>1)</sup> Առաջի թխած:

Ձուզեց յիրան արքայութեն,  
Ուզեց յիրան խառնուկ ծամին յիստկութեն (մար-  
բութիւն):

Եւ կամ

Օգորմի անյիշատակ պառուին,  
Գացե նստե օխտը ճամբա բաժին,  
Քարը քաղե, աւազը մաղե,  
Ձուզե իր մեղաց թողութեն,  
Ուզեր ա խառնած կաժին,  
Թախկած մազին յիստկութեն:

Եթէ կար անելիս ձեռքերը քրտնում են, բոշա կնոջ յետոյքը կամթում են, որ այլևս չքրտնի: Նոյնն անում են նաև այն մտքով, որ ձեռքի դանակը սուր լինի: Նոյն նպատակներով նաև ձեռքերը բռնում են աման հաւի պոչի տակ, որ ձուռն ընկնի ձեռքերի մէջ:

Թուրս գնելիս տանտիկիւնները երեք անգամ պատում են տաշտի շուրջը և խաշաձև անցնում վերայից. ապա շարում ձուռ-  
ները յարզի վրայ և իրենց գլխի ծածկոցը ծոճրակի և շորերը մէջքի կողմից բարձրացնում, որպէսզի վառեկները զեղեցիկ լինեն:

Եւ երբ վառեկների դուրս գալու ժամանակը մօտենում է, մի բուռ ալիւր են խփում պատին, այնպէս որ պատի վրայ գոյա-  
նում են մեծ ու փոքր խալեր, որոնք, իբր, ներկայացնում են թուխն իւր ձագերով: Այսպիսով նպատում են վառեկների շուռ  
դուրս գալուն:

Կանանց արգելուած է հաւ մօրթելը, ինչպէս նաև նրանց,  
որոնք քաւոր չեն եղած:

Նոր գնած հաւերի ոտները լուանում են տան թոնրի ակի  
վրայ, որպէսզի սրանք կապուին տան հետ և չգնան կորչին:

Կանայք չորեքշաբաթի, ուրբաթամաթի և կիրակնամաթի գիշեր-  
ները առազաստ չեն մտնում, մեղք համարելով:

Գիշերով տախտը չեն աւելում, որպէսզի տան խէրն ու բա-  
րաբէն դուրս չգնայ, ոչ էլ աւելը ուրիշին են տալիս:

Գիշերով չեն լուացւում, որպէսզի պատուհաս չպատահի:

Գիշերով ծամոն ծամելը բնուելի միս ա, կենդնի թիս առ:

Գիշերները գործածական ամանները բերինքսիվայր են  
դնում, որ սատանաները չտանեն գործածեն:

Զկրտալիս ասում են. «Մեղան Ասածու», որպէսզի յանկար-  
ծամահ լինելով մեղաւոր չգնան երկինք:

Ազը չեն թափում, որպէս զի միւս կեանքում աջքի թարթա-  
փով հաւաքել չտան:

Կերակրի ամանները չեն լիզում, որպէսզի իրենց հարսանիքին բուք չլինի:

Բուք է լինում նաև պառաւած աղջկայ հարսանիքին:

Եթէ պատահմամբ իրար մէջ ընկած հողաթափները միասին հազնեն՝ երկու անգամ կամուսնանան:

Եթէ կարողանան իրենց արմուկը համբուրել, բոլոր ցանկութիւնները կը կատարուեն:

Յաւը-չոռը սրբի դուռը թողնելու նպատակով հիւանդները իրենց հանդերձներից կարում են և սրբի քարերի, ծառի ճիւղերի վրայ կապում:

Եթէ հիւանդը մի ուրիշ մարդու վրայով շէմքէ անցնի, իւր ցան ու չոռը վերջինիս կանցնի:

Եթէ մայրը հօր հին շորերը «թաթաշոր» (խանձարուրի շոր) շինի երեխայի համար, սա «խորշուկ» հիւանդութեամբ կը հիւանդանայ:

Եթէ հիւանդը եղունգները կտրի, հիւանդութիւնը կը վերանորոգուի:

Եթէ դատարկ օրօրացը օրօրեն՝ երեխան կը մեռնի:

Եթէ առաջին անգամ եկած ձիւնից մարդ ուտի՝ մայրը կը մեռնի:

Եթէ ննջեցեալ անցկացնելիս մեծ և վոքք անից դուրս չգան՝ հրեշտակակոխ կը լինեն:

Եթէ շերեփը թողնեն կճուճի մէջ՝ մեռելի աչքը աշխարհքից չի կտրի:

Եթէ մեռելը քիչ է լինում, տէրտէրները հրամայում են ծամկոչին դադարը ձեռնել:

Եթէ քահանայ մեռնի, աշխարհը կը խաղաղի, ցաւը չոռը կը վերանայ:

Եթէ մինի աչքերը ձիւնից ձմէթ է լինում, առանց նրա դիտութեան աղ են ածում գլխին, որ անցնի:

Եթէ սխտորի կճեպը կրակը ձգեն՝ դարձուրի վէրքը կը մըռմուսայ:

Խանութպանը խանութը բանալիս նախ խաչակնքուած է և ապա կողպէքը բանում: Առաջին անգամ բան ծախելիս՝ (սիֆտին) ապառիկ չի տալիս, որ մինչև երեկոյ շարունակ ապառիկ չզօճառէ: Նաև ուշադրութիւն է դարձնում, թէ առաջին գնորդի ձեռքը խէր էր թէ շառ. եթէ խէր է՝ մինչև երեկոյ լաւ առուտուր կուսնանայ, իսկ եթէ շառ՝ վատ:

Շարաթ երեկոններին խանութպանները խանութներում խունկ են ծխում, որպէսզի լաւ և օգտաւէտ առուտուր ունենան:

Կշեռքի նժարին ոտք դնելը մեղք է համարուում:

Արհեստաւորի դազգահի, սալի վրայ նստելը մեղք է համարուում, «խէշն ու բարաքէն» կը պակսի:

Բոյախոյու կարասի ներկերը փշանալիս՝ մի մեծ սուտ են խօսում, որպէսզի ներկերը՝ կրկին լաւանան, այս պատճառով էլ մի անհաւատալի, սուտ բան լսելիս ասում են. «Կարաս աւաւրի»:

Վախեցածին բժշկելու համար անխօս տանում են մի նոր թաղուածի կամ սպանուածի գերեզմանի վրայ ոտներն ու ձեռները լուանում և ջրի ամանը կոտորում գերեզմանի վրայ: Վերադարձին կարող են խօսել, իսկ գնալիս՝ ոչ:

### ԿԱՄԱՒՈՐ ՊԱՍԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Նոր-Բայազէտի հին սերունդը մեծ ջերմեանդուլթեամբ պահում էր ոչ միայն շարթապասերը, այլև չորեքշաբթի և ուրբաթ օրերը. այժմեան սերունդը այնքան մեծ կարևորութիւն չի տալիս, թէև խեղճը սաստիկ աղքատութեան պատճառով ուտիս օրերն էլ է պահ պահում, որովհետև կերածը ցամաք հաց է միայն: Պասերից Մննդեանը, ս. Սարգսինը, (Առաջաւորաց), Մեծ պասի առաջին և վերջին շաբաթները, Համբարձմանը, Վարդավառինը և Աստուածածնի այնուամենայնիւ պահում են:

Բացի այս օրինական պասերից՝ գլխաւորապէս պատահանայք կամաւոր պասեր ևս պահում են, սակայն ոչ բոլորը, այլ ով կամենայ, որովհետև պահող պահողաց ա»:

Այսպիսի կամաւոր պասերից նշանաւոր են.

Մ. Կարապետի պասը.—Տևում է Համբարձումից մինչև Վարդավառ. միայն շաբաթ և կիրակի օրերը ուտում են ուտիսի կերակրներ, բայց ոչ մեղէն: Այս պահեցողութեան ընթացքում նաև ծամոն չեն ծամում, մեղք համարելով:

Վարդավառի «Մթորք» պաս.—Պահում են Վարդավառի պասի նախընթաց շաբաթը, հետևապէս և՛ Վարդավառի պասի մի շաբաթուայ փոխարէն՝ երկու շաբաթ:

Ս. Աստուածածնի պասը.—Պահում են նոյն պասի նախընթաց շաբաթը ևս:

Ս. Վարդանի պասը.—Պահում են բարիկենդանի վերջին շաբաթի հինգ օրը և շաբաթ օրը ուխտ գնում Ալափարսի ս. Վարդանի վանքը: Այս պասը գլխաւորապէս պահում են յօդացաւ (քամի) ունեցողները՝ ս. Վարդանի վանքից բժշկութիւն հայցելու յուսով: